

Տարեկան	1	50
Վեցամսեայ		75
Եռամսեայ		40

Տարեկան	10	Փրանք
Բաժանորդագիրն	ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԵԼԻ	



ՇԱԽԱՍԻՍԹԵՐԻՍ

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պաշտօնական յայտարարութիւն Միացեալ Նահանգաց Զայոց Առաջնորդարանի. — Արձագանք մը. — Սեբաստիոյ ազգային որբանոցը. — Չէյթուհի Հաշիւը և իմ պատասխանս. — Ազգային քրոնիկ. — Աստի-Անտի. — (Նամակ Պատօնէն). — Նամակ Ուսարէն. — Նամակ Շիբակոյէն. — Նամակ խմբագրութեան. — Ներքին լուրեր. — Բաղաքական. — Խմբագրական յայտարարութիւն և պատասխաններ. — Բանասիրական (Փերմանիա և Հայերը):

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ ԿԱԶՄԱԳԱՑ

ՀԱՅՈՑ ԱՌԱՋԱՆՈՐԴԱՐԱՐՈՒ

Ի նպաստ վանի սովելոյ Հանգանակուած և իմ ձեռամբ կամ գիտութեամբ ցարդ Կ. Պօլոյ Ամեն. Ս. Պատրիարքին զրկուած նուիրատուութեանց ցուցակն է Հետևեալը.	
Պօլոյ օւնէն	§ 200, 00
Լինէն	« 230, 00
Լօրէնսէն	« 163, 50
Սէյլըմէն	« 30, 00
Նիուպլըրիօթէն	« 40, 00
Նիուբօրդէնիուսէն (Վիր.)	« 12, 50
Մանչէսթըրէն	« 18, 75
Մօնթէլլոյէն (Պրայթըն)	« 21, 75
Միլֆըրտէն	« 40, 00
Սըմմիթէն	« 25, 14
Ֆիլատէլֆայէն	« 30, 00
Տօվըրէն	« 28, 00
Թրոյէն	« 115, 00
Գումար	§ 954, 64

ՅՈՒՆԻՍ ԵՊ. ՍՍԱՐԱՃԵԱՆ

Ուսար 5 յունիս 1899

ԱՐՁԱԳԱՆՔ ԻՐԸ

Գաղթականութեան մէջ ճարակուել սկստող բարոյական ախտերը և անոնց դարմանները օրուան Հարց են դարձած:

Արդարև ժողովրդին յուսահատական դալկացումէն ետք, մոլութիւններու մուտքը շատ բնական կը գտնուի: Տենդոս ուղեղներ մաքի ծայրայեղութիւններով զանազան գաղափարներու կը կառչին առանց ողջամիտ վերապահութեան: Եւ օր մը տխուր Հիսթափուտը կը դատարկէ զուրկը՝ ուր մուտ կը գտնեն ամէն կարգի աղանդութիւններ:

Շատ ճիշդ է թէ կրօնական, ազգային, ընկերական ու ընտանեկան միջնակայքներ են որ կազմուցուեն մարդը: Ցաւալի է որ այդ շինք միջնակայքներէն զուրկ ենք. սակայն

Հայուն փոթորկայոյզ միտքը կը ձգտի դէպի այդ միջնակայքեր: Իսկ մեր մտքերուն մէջ յաւիտեական ամպրոպ կայ, Հնգգարեան ատելութեան ու վրիժու լաւան կեռայ մեր սրտերուն խորը, վրդոնք յարատև: Սակայն այս վրձակին լաւագոյն և օգտակար փոփոխութիւնը մամուլին և կազմակերպութեան ձեռքն է, մամուլը յուզելու և ընկերական կազմակերպութիւնը դաստարարելու է:

Գաղթականութիւնն երեք դասակարգի կը բաժնուի. ա. կուսակցականը՝ որը թէ և թուով կամեամասարար քիչ՝ իսկ ազդեցութիւնով զօրաւոր է: Բ. Պաշտօնողականը, աւելի կը փափաքիմ շէջօք ըսել, որոնք առաջինէն շատուոր՝ բայց շինական պարիսպներէ ներս իրենք իրենց մով կը զբաղին: Գ. Պատրիարքականը, որը թէ և կրակոտ, անկարգութիւն մոլորանդութիւնով մը իրենց զաւանանքին յարած ու փարած բարոյագէտ կիշտան ու կիշտան:

Եկեղեցի չունինք, դպրոց չունինք, ընտանեկան յարկ չունինք. Հիմակուհիմա, իմ կարծիքով միակ փրկարար միջնակայքը ազգային կազմակերպութիւնն է, անուրանալի է որ այդ միջնակայքը՝ իր բարձր ու նուիրական ներշնչումներովը շատեր փրկած է թէ տնտեսագէտ և թէ բարոյագէտ. և որ կարևորագոյնն է ազգային խաղաղ մամուլը բերած ու ինքնազարգացումի դպրոց մը եղած է:

ՍԵՒԱՍՏԻՈՅ

ԱԶԳԱՅԻՆ ՈՐԲԱՆՈՑԸ

Սեկստիոյ ազգային որբանոցի Ամերիկայի Օթմանդակ Մանսիտու մբի վարչութիւնը, Հետևեալ պաշտօնական նամակները զրկած է մեզ ի Հրատարակութիւն:

Տխար Ատենապետ,

Յանուն տեղւոյս անտերուծ որբոց՝ ըստ նախնի բարերար սովորութեան՝ Ձեր ուղարկած տասն օսմ. ոսկին գոհունակութեամբ և շնորհակալութեամբ սրտի ստացանք և այդ թշուառ էակներու Հետ անգամ մ'ալ վերուղերձեցինք մեր սրտաբուխ մաղթանքներն առ ին՝ շնորհելու համար Ձեզ և այն բարեխէր ու որբախէր անձնաւորութեանց երկար և երջանիկ տարիներ. որ ի Հեռուստ իսկ կը

*) Չէջօք համարուած դասակարգին մէջ կան շատեր որ ազգային պարտականութիւններ կատարելու մէջ չեն թերացած և աւելին ընելու արամադիր են երբ արդար վստահութեան ներշնչումը ունեցող մարմին մը առջև ինքզինքնին գտնեն:

Ծան. Խմբ.

ժուծաք գիւծեան թաշկինակով սրբել որբերու արցունքը, մոռցունել անոնց վշտերն և գործնականապէս ապացուցանել թէ Հայ էք և թէ Հայր՝ այդ անհայր անմայր մանուկներու:

Կը կրկնեմք դարձեալ մեր անհուն շնորհակալութիւններն Ձեր բարեգործ ձեռնադրութեանց համար և կը սիրեմք յուսալ թէ այսուհետև ալ աւելի խնամոտ ակամարկ մը պիտի ձգէք այս գիւծեան յարկին վրայ, պիտի կրկնապատկէք Ձեր ջանքերն և զգալի նպատակներով պիտի սատարէք մեր ընդ մերթ այս նուիրական Հաստատութեան որոյ կանգնումն ու զարգացում՝ կախումն պիտի ունենայ մեր և Ձեր անկեղծ ու ճշմարիտ պարտաճանաչութեանէն:

Ապահով եմք Ձեր և Ձեր սիրեցեալ ընկերաց բարեխիտական զգացմանց և կը խնդրեմք որպէսզի որբանոցի այժմեան ընդարձակումն ալ նըկատողութեան առնելով բազմապատկէք Ձեր ջանքերն և շնորհակալար կայանէք Ձեզ այդ մատուցած մանուկներն: Ինչպէս պիտի տեսնէք ներփակեալ տեղեկագրէն՝ զոր պատրաստած է Որբանոցի Պատ. Խնամակալութիւնը. որբերու թիւը բարձրացած է առ այժմ 156-ի. ազդիկ թէ մանչ և տեղի անձկութեան պատճառաւ Հարկադրուած ենք մայիսին յետաձգել այն բազմաթիւ որբոց ընդունելութիւնն՝ որոնք ամէն օր կը դիմեն մեզ և կը խնդրեն ընդունուել հսն: Եթէ Տէրը կամի՝ շնորհիւ Ձեզ նման մարդասէր անձնաւորութեանց՝ յառաջիկայ գարնան շէնքի ընդարձակմամբ և Հասոյթից առաւելմամբ կարող պիտի ըլլամք 3-400 որբեր պատասպարել:

Մեզ կը մնայ միայն օրհնել զՁեզ և մաղթել որ երկինք շնորհէ Ձեզ՝ փոխարէն Ձեր տրոց Հարիւրապատիկ և Հազարապատիկ, և պահէ զՁեզ յամենայն փորձանաց, ի փառս Ազգիս և յօգուտ նորարաց Որբանոցիս: Ողջունելով զՁեզ և զհամօրէն սիրեցեալ զաւակունս մեր՝ սրտաբուխ մաղթանք մնամք աղօթարար:

Առաջնորդ
Սեբաստիոյ և Եւզոպիոյ
ՊԵՏՐՈՍ ԵՊ.

1899 յունուար 28
Սեբաստիա

Տխար Ատենապետ

98 դեկ. 27 թուական Ձեր պատուական մի նամակն ուրախութեամբ ընդունեցինք: Ներփակեալ տասն օսմ. ոսկեայ շէքն Հոս ծախելով փոխարէնք գանձեցինք և Ձեր օժանդակ մասնախմբի անուամբ մուտք գրեցինք:

Բիւր շնորհակալութիւն կը մատուցանեմք Ձեզ, որ ինչպէս անցեալ տարի, այս տարի ալ Ս. Մնջեան առթիւ որբերը խնդացուցիք, Աստուած խնդացուցած եղաք:

Վիճակիս բարխնամ Առաջնորդ Սրբազան Հայրը Պոլիսէն վերադառնալով Ազգ. որբանոցիս մեծ զարկ մը տուաւ: Հիմա որբանոցը Հաստատուած է քաղաքիս ներսէսեան վարժարանը, իր և յարակից բոլոր շէնքերուն մէջ: 134 որբ տղայ և 22 որբ աղջիկներ կը խնամուին ամենայն կատարելութեամբ: Յառաջիկայ գարնան նոր շէնքեր պիտի կառուցուի Ս. Սարգիս եկեղեցւոյ յարակից գետիններուն վրայ և որբոց թիւը երկուսեռ 300-ի պիտի բարձրանայ: Որբերը լաւ Հագուած են, լաւ կը սնանին և խնամոտ դաստարակութիւն կը սրուի իրենց:

Սոյն տեղեկագիր նամակաւ, յանուն 156 երկուս որբոց, կը խնդրենք ջերմագին, որ ինչպէս սովոր էք, Դուք ալ Ձեր լուծանքը, Ձեր ջանքերը բազմացնելով բարերար Հանդիսանաք և անմահացնէք Ձեր յիշատակը: Բրիտանիական մարդասիրութիւնը սրբազան և նուիրական պարտք կը դնէ ամեն Հայու վրայ օգնել այսպիսի մատրդասիրական Հաստատութեանց: Բազմապատկելով Ձեր ջանքն ու ճիգը, անհամբեր Ձեր օգնութեան կը սպասեմք:

Ի դիմաց խնամակալութեան Ազգ. երկուս Որբանոցի,

Կնիք Ստորագրութիւնք
1899 յունուար 25
Սեբաստիա

ՉԵՑՈՒՆԻ ՀԱՇԻՒՆԵՐԸ

ԵՒ

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆՍ

Կարգ մը մարդիկ՝ Չէյթուհի յանձնախումբին հովանաւորութեան տակ տրուած թատերական ներկայացման Հաշիւներու խնդիրը իբրև զրամագրու ձեռքբերին սուած՝ սուգին անդին երկդիմի զբոյցներ կը տարածայնեն, ուղղակի ոչինչ կըսեն, իսկ անուղղակի ամեն անխիղճ անարկութիւններ կընեն, ձեռքի տակէ խայթելու և խնդիրներէն անտեղեկալ Հաստարակութեան վստահութիւնը մեզի դէմ թուեալորելու նպատակաւ. տեսնելով մանաւանդ որ մեր լուծելը ստանկներուն քաջարութիւն կազդէ, պարտ յանձին համարեցի Հրապարակաւ Հետևեալ յայտարարութիւնը ընել:

Նախ՝ Չէյթուհի յանձնախումբը թատերական ներկայացման ընդհանուր սոմսերուն և Հաշիւներուն պատասխանատու միայն մէկ անձ ճանչցած, մէկ անձէ Հաշիւները առած է, եւ ԱՅԳ ԱՆՁԸ ԵՍ ՉԵՄ:

Երկրորդ՝ ես ալ ուրիշներու պէս ծախելու համար որոշ թուով սոմսեր առեմ եմ պատասխանատու ըլլալով մի միայն ինձի տրուած սոմսերուն:

Երրորդ՝ ես անձամբ և ոչ իսկ մէկ Հատ սոմսակ ծախելու ոչ ոքի: Չորրորդ՝ ինձի տրուած սոմսակ-

ները ծախելու համար հետեւեալ ան-
ձերուն յանձնեցի, որոնցմէ տիրաք
Գրքարդեան և Ոսկերիչեան իրենց
հաշիւները և ծախուածներուն գու-
մարները անձամբ գանձապետին
տուին և ընկալագիր առին: Առաջի-
նը իր կորուած կարծած տոմսակ-
ներուն համար ալ վճարած էր:
վերջէն զանոնք գտնելով վերադար-
ցուց. ուստի անոնց արժէքին տե-
ղը իրեն յատկացուցի տիկնոջ մը 5
տոլարի նուերը: Տիրաք Ա. Թագ-
ւորեանի ծախած 16 տոլար 25 սէն-
թին. Ե. Արսէնեանի 5 տոլար 25
սէնթին. Յ. Երամեանի 4 տոլար-
ըն և Պ. Գարբիէլեանի 9 տոլար 25
սէնթին հաշիւները և դրամները ես
անձամբ յանձնեի եմ գանձապետ
Տիրաք Հիւրմիշիին և անկէ ընկալա-
գրեր ստացած եմ:

Ահա իմ ամբողջ անձնական հա-
շիւս: Իսկ գալով Ձէյթունի ընդ-
հանուր հաշիւներուն՝ ո՛վ որ և է
զեղծումի մը մասին որ և է որոշ
բան մը գիտէ, կը փափաքիք որ
երեսն բերէ և «Տիրաք» ի էջերը
բաց պիտի ըլլան այդ խնդրոյն համար:
Գ. Պ. Զիթնեան

ԱԶԳԱՅԻՆ ԻՐՈՆԻԿ

ՈՐԲԱՆՈՑՆԵՐՈՒ ՇՈՒՐՋԸ

Թղթակից մը Լօնտօնի «Թայմզ»
թերթին կը գրէ.

Կ. Պօլսէն եկած լուրերը կը հաս-
տատեն այն տարածայնութիւնները,
թէ թուրք կառավարութեան կողմ-
էն հայկական որբանոցները գոցելու
համար առած քայլերը լուրջ կերպա-
րանք ստացած են: Բրիտանական և
Միացեալ Նահանգներու կառավարու-
թիւնները՝ ինչպէս կը հասկցուի՝ կա-
տարելապէս համաձայն են թէ ի՞նչ
քայլեր պիտի առնուին այն պարա-
պային, երբ Գուրու հայ մանուկնե-
րու համար բողոքականներու բացած
որբանոցները գոցելու հրամանք ետ
առնեն ուշացնէ. Այս կրթարաննե-
րը թէպէտ և անգլիացի, գերմանա-
ցի, գուրջերիացի և չուէտացի բարե-
սիրական ընկերութիւններու կողմէ
կօծանդակուին, սակայն Փոքր-Ասիա
գտնուող Միացեալ Նահանգաց մի-
սիօնարներու կառավարութեան տակ
են. Սըր Ն. Բ. Օ' Օրօնօր և Սթըրա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ՀԱՅԵՐԸ

(Շարունակութիւն նախորդ թիւէն)

Բայց այն դիրքը, որուն մէջ
Գերմանիա ընկաւ այս անյաջողու-
թեան պատճառով՝ վերջին ծայր գոթ-
ւարին էր: Իր հաւանութիւնը, որ նոր
երբեակ նիզակակցութեան կուտար,
որպէսզի միահողոյն գործեն Կ. Պոլ-
սոյ մէջ, զինքը գործնականապէս
թշնամանալու դիրքի մը մէջ կը դը-
նէր Ռուսիոյ հետ, պետութիւն մը,
որ Կ. Պոլսոյ մէջ բրիտանական ազ-
դեցութիւնը չէզոքացնելու մէջ ա-
մենամեծ շահն ունի: Ասիկա, իրա-
կանապէս, պատերազմով սուլթանին
օգնելու դէմ Ռուսիայի առջև ար-
գելք մըն էր և մօտիկ արեւելեան
խնդիրներու մէջ Ֆրանս-Ռուսական
դաշնակցութիւնը կանգամաւորած էր,
մինչդեռ Անգլիային թող կուտար,
որ իր յատակագիծն ի գլուխ հանե-
լու համար երբեակ նիզակակցութեան

ուս արդէն խիստ դիմումներ ըրած
են մեծ եպարգոսին, սակայն առանց
արդիւնքի: Կացութիւնը դժբաղդա-
բար կնճռոտած է հայ կաթօլիկ կը-
ղերներու՝ առած քայլերուն համար,
ասոնք կուզեն ազդեցութիւն բանե-
ցնել սուլթանի վրայ բողոքական
միսիօնարներու դէմ չնչին պատ-
րուակներով թէ, տեսուչները յե-
ղափոխական առաքելներ կը պահեն
և գրգռում կը տարածեն:

ՀԱՅ ԳԱՂՔԱԿԱՆՆԵՐ

Կ. Պօլսէն կը հաղորդեն՝ ուու-
սական դեսպանատունը մայիս 6 ին
Բ. Դրան յանձնեց կովկաս ապաս-
տանող հայ գաղթականներու լիա-
կատար մէկ ցանկը, որոնք Փոքր Ա-
սիա իրենց հայրենիքը պիտի դառ-
նան: Ցանկը 20,000 հայերու անուն-
ներ. տարբեր, ծնած գիւղեր և գաղ-
թելու թուականը կը բովանդակէ:
Ասոնց մեծամասնութիւնը կիներ և
մանուկներ են:

ՎԱՆ

Վանէն անհատ անձնաւորութիւն-
ներու եկած տեղեկութիւնները կը
ծանուցանեն թէ՛ քիւրտերու կողմէն
հայերու վրայ եղած յարձակումները
վերանորոգուած են, այն լուրին վրայ
թէ տարագիր հայեր վերստին պիտի
տիրանան իրենց կալուածներուն, որ
գրաւուած էին քիւրտերէն:

Վանի Ամբերիկեան Որբանոցէն
10 ի չափ հասակաւ որբեր իրենց
գեղերը զրկուել են մայրիս սկիզբ-
ները, արուելով ամէն մէկուն անկո-
ղին մը, ձեռք մը զգեստ, իւրաքան-
չիւր որբին հինգական լիբա՝ զոյգ մը
եզ գնելու համար, նաև սերմնացու և
ուսուելու ցորենի սրպէսզի իրենց գիւ-
ղին մէջ նորէն տուն տեղ ըլլան:

ՏԻԳՐԱՆԱԿՆԵՐՏ

Տիգրանակերտէն հիւպատոսները
կը հաղորդեն թէ շատ մը քմահաճ
ձերբակտուութիւններ և զիջերային
խուզարկութիւններ տեղի կուենան
քրիստոնեայ ազգաբնակչութեանց
մէջ. կառավարութիւնն այդ բանին
համար պատրուակ կը բռնէ կարծեց-
եալ դաւադրութիւններ, որոնց մա-
սին, սակայն, հիւպատոսները կըրեն
թէ անհիմն են:

ամբողջ զինուորական ուժը գոր-
ծած է:

Չարին վստահութիւնը վերահաս-
տատելն այնքան ալ դուրին խնդիր
մը չէր կայսեր համար և հարկաւոր
էր Պալքանեան գաւառներու և Յու-
նաստանի մէջ յարուցուած խնդիր-
ներուն մէջ գործնականապէս չէզոք
մնալ և թողուլ, որ Ռուսիա զանոնք
կարգադրէ իր ուզածին պէս, հերիք
էր որ Աւստրո-Հունկարիայի Թուրքի-
այի մէջ ունեցած շահերը չէին բըռ-
նաբարուիր. այս բանը նախապէս եր-
բեակ նիզակակցութեան պայմաննե-
րով ալ ապահովուած ըլլալով: Հե-
տեանքն այն եղաւ, որ Ռուսիոյ և
Աւստրո-Հունկարիայի միջև պայմա-
նագրութիւն մը հաստատուեցաւ, եր-
կու պետութիւններն ալ ստիպելով,
որ ո՛չ Պալքանեան թերակղզու նա-
հանգներուն ոչ ալ գաւառներուն,
Յունաստանն ալ մէջը ըլլալով, օգնեն
այն պարագային, երա տանք կը փո-
ձէին պատերազմ արձարծել թուր-
քիայի դէմ փոխադարձ վրիժառու-
թեան համար և որչափ ասուն որ
իրենց պայմանագրութիւնը կը մնար,
ներկայ խտրող դիրքը պահեն:

Աւստրո-Հունկարիայի քաղաքա-
կանութիւնն է թուրքիայի և Պալ-

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՍՏԻ ԱՆՏԻ

(Նամակ Պօստօնէն)

Օրիորդ մը և խաչագողներ. —
Պատուելի մը և միջատներ. — Սիւ-
րիական ապստամբութիւն. — Նոր
միսիօնարմը:

«Տիրաք»-ի 80 թիւը խաչագող-
ներու յիշատակը արթնցուց մաքիս
մէջ. օրիորդ մը նայն արհեստով կըզ-
բաղի եղեր, հոս ալ տեսանք այդ
դասախօսուհին որ թրքական տարա-
զով հագուած՝ սիւրիացի արարներու
ձեռագործ ապրանքներ մէջտ պայ
արմինընս» ըսելով ամերիկացիներու
քել կուզէր: Բաց հակառակ չէ՞
ասպետական օրինաց խեղճ աղջկան
մը մասին այնքան բծախնդիր ըլլալ,
երբ հրապարակի վրայ տասնեակնե-
րով խոշոր խաչագողներ կը շրջին,
մարդիկ որ դպրոցի, եկեղեցիի, հի-
ւանդանոցի ու սովելոց անունով հա-
զարուոր տօյրներ իրենց անյատակ
կոկորդը անցուցին և անպատկառ կը
շարունակեն իրենց ամօթալի գործը:
Ասոնք ալ սակայն ընտանիքի տէր
մարդիկ են, գործարանի մէջ շեն
կրնար աշխատիլ, կերպով մը պիտի
սպրին. բայց ի՞նչ կըսէք, ամերիկա-
ցիներու քարոզիչ հայ պատուելի մը
որ լաւ դիրք, ապահովեալ ապրուստ
ունենալով հանդերձ՝ սոսկ իր ծուխի
օրիորդները դուարձացնելու համար,
թուրքի հանդերձ հագած ժողով մը
առջև նամակ կընէ, հայ գիւղացիի
մը պէս վրան մարդկային միջատներ
կը փնտռէ: Հայ ազգը, լեզուն,
պատմութիւնը ամերիկացու ծանօ-
թացնելու համար աւազակ ու ոչլոտ
պատուելիներէ զատ ո՞վ ունիք...

Ոսքը խաչագողներու վրայ է-
լսեցի՞ք Սիւրիական ապստամբութիւ-
նը, ի՞նչ կը խորհիք այդ անկախու-
թեան հրատարակութեան վրայ, այս-
պէս մեր արաբախօս բարկամները
նաև, թնդանթ, ուզմամթերք և
ամենէն աւելի կուենու պատրաստ
հազարաւոր քանր ունին: Այս ամե-
նը նազարէկի օրերուն յիշատակը
չա՞րթնցներ:

Կերևի թէ սիւրիացիները հայոց

քանեան պետութիւններու միջև իս-
գելիք ունէ պատերազմի արգելք
ըլլալ, սակայն միւս կողմէ քաջաւե-
րել զանոնք, որ իսկական քաղաքա-
կան անկախութիւններու մէջ զար-
գանան աստիճան առ աստիճան, ոչ
թէ միայն ուս ազդեցութեանն ան-
կախ, այլ նոյնիսկ Աւստրիայէն և
այսպիսով հաստատ շղթայ մը կազ-
մեն երկու մեծ պետութիւններուն
միջև և ապագային համար արգելք
ըլլան, որ այս երկուքէն և ոչ մին
կարողանայ Պալքանի մէջ նոր հողի
տիրանալ, Կ. Պոլսն ալ մէջն ըլլա-
լով: Պուլկարներուն հիմա յայտա-
բարուած է, ինչպէս յոյներուն ե-
ղաւ իրենց կուրը սկսելէն առաջ, թէ
քնաւ ունէ կերպով օժանդակութիւն
պիտի շը գտնեն այն ամեն պատե-
րազմներուն մէջ, որոնց պատասխա-
նատուութիւնն իրենց վրայ կիյնայ
և անչուշա Ռուսիա այս պայմանա-
գրութեան կպած պիտի մնայ մինչև
այն ժամանակ, երբ ինքզինքը պատ-
րաստ գաայ Կ. Պոլսի վրայ քաշելու,
իսկ Աւստրո-Հունկարիա կը յուսայ,
թէ այդ վայրկեանը հասնելէն առաջ,
Պալքանի տէրութիւնները, որ եր-
թալով կազմուելու վրայ են, պիտի
հասկան իրենց ճշմարիտ քաղաքա-

անունը, ցաւերը կեղծելէ ձանձրա-
ցած, սկսան մեր յեղափոխական
գործերն ալ կեղծել, պատիժնին
գտան:

Փրօզիտէնսի հայերը 800 տօլար
հանգարակեցին Վանի սովելոց հա-
մար» կըսէր հայու մը ուրախութիւ-
նը ցոյց տալով երեսին վրայ երբեմնի
Վանի միսիօնար Ալէնը, երիտասարդ
յաջորդը ծեր ու առեւի չէրքօքին:
Հատ համակրանք գտած է ամենակը:
Մաքուր հայերէն մը, անկեղծ զգա-
ցումներ և զարգացած միտք, ասոնք
են այն առաւելութիւններ, որոնցմէ
իսպառ զուրկ էր իր նախորդը: Մր-
Ալէն անցելոյն մէջ մեծ եռանդով
աշխատած է վասպուրականի խեղճ
գիւղացոց համար, շատ նեղութիւն
յանձն առած է կողոպտուած երկրա-
գործներուն՝ եզ, կով և այլն ճարելու
համար, հիմա մեր ժողովներուն
կուգայ մեզ կը յիշեցնէ մեր պարա-
քը մեր սովելալ եղբայրներուն օգ-
նելու, այս տեսակ քրիստոնէութեան
մեր խելքին կը պատկի: Բայց ասե-
ցէք, այս ամերիկացի պատուելի
խաչագողներուն հետ:

ՍՍՍԻ

ՆԱՄԱԿ ՈՒՍՏՐԷՆ

Անցեալ կիրակի երեկոյ Ս. Փրկչի
ժողովարահին մէջ Ազգային Ընդ-
հանուր ժողով մը գումարուեցաւ
Գեր. Սրբազան Առաջնորդի հրաւի-
րանօք: Ժողովին նպատակը նուիրա-
կան էր, սակայն ուսարարական ազ-
գայիններէն միայն 80 հոգի բարեհա-
ճած էին իրենց ներկայութեամբ յար-
գել սոյն ժողովը: Չնայելով հանդի-
սականաք նուազութեան ժողովը
խիստ շքեղ եղաւ ընդ նախագահու-
թեամբ Սրբազան շօր՝ երգէ մը
վերջ բնմ էլաւ Գեր. Նախագահը ու
ժողովականաց թուին նայելով ըսաւ
ի միջի այլոց՝ «Ուղեցիք այս անգամ
անկեղծ վարուել, գիտնալով որ սո-
վատանջ վանք հայու սիրտն է, ու
ամէնքն ալ անխտիր կը նուիրեն ի-
րենց լուսման հայու սիրտը փրկելու
համար, որ հայը սպրի: Այս համոզ-
մամբ մեր յայտարարութեան մէջ
ալ մեր բուն նպատակը ծանուցինք,
սակայն կը տեսնենք որ սխալած ենք

կանութիւնը և պատրաստ պիտի
գտնուին երկու մեծ պետութիւննե-
րու որեւէ մէկուն կողմէն եղած յար-
ձակումի մը դէմ իրենց շահերը
պաշտպանելու, որ հաւաքարար ու-
նին:

Անգլիայի եւ կենալը Իտալիայի
և Աւստրիայի հետ ունեցած համա-
ձայնութեանն, որը Գերմանիայէն,
այսինքն երբեակ նիզակակցութեանն
կը պաշտպանուէր, բնականաբար
մեծ գրգռումներ առաջ բերաւ կայ-
սեր մտքին մէջ, որ, — անշուշտ
պէտք է ընդունինք — զայն (Անգ-
լիան) պատասխանատու բռնեց այն
հազիւհազ քօղարկուած պարտու-
թեան, գոր Գերմանիա կրեց և ալ
աւելի մեծ գրական պարտութեան
մը համար, որ անկարելի դարձուց
հաստատել համաձայն գործակցու-
թիւն մը Անգլիայի և երրեակ դաշ-
նակցութեան միջև, որ կարող էր
Ֆրանս-Ռուսական դաշնակցութիւնը
անդամաւորել և Եւրոպայի մէջ
պատերազմ մը անկարելի դարձնել:
Անգլիան քառեակ նիզակակցութեան
նախագահը պիտի ըլլար և Գերմա-
նիան ցամաքի վրայ, իսկ Անգլիան ծո-
վու գիրքերու վրայ իշխելով, այլևս
այս խաղաղական համագործակցու-

եղեր, արդ ինչ որ կրնանք մենք ընեն: Յետոյ Օր. Ազնիւ Բարակեան իր քաղցր ձայնով երգեց, իր փոքրիկ քրոջ հետ, «Արեւելեան աստղ» երգը, (Թարգմանութիւն Կ. Յ. Բարակեանի): Ապա բեմ հրաւիրուեցաւ Պատ. Պէնէնէան, որ իր պերճախօսութեամբ ժողովուրդի սիրաբ թունդ հանեց, խօսելով վանի մեր սովատանջ եղբայրներու մասին, ի միջի այլոց ըսաւ, «Ձեզ յուզելու պէտք չկայ, վան, մեր ազգակիցները, նօթի կը տառապին, ոմանք իսկ թոյներով կը մեռնին»: Առաջարկեց որ անմիջապէս հանգանակութեան սկսինք: Օր. Էրման Մունեարիեան, իր որ որ մը ներկայացաւ ու երգեց, «Օգնեցէ՛ք եղբայրներ մեր հայրը մայրը տածիկը ջգրեց...»: Տիկին Բարակեան իր զաւակները վարժեցուցած էր և ընտիր ներդաշնակութեամբ ու շարժութեամբով երգեցին՝ «Հայ ենք մենք ալ եղբայրները» երգը: Հանգանակութիւնը սկսաւ. 46 անձինք միայն մասնակցեցան և գումարը հասաւ 150 տօլարի: Յանձնարուեալ մը կազմուեցաւ երեք անձերէ բաղկացեալ, որ տուները պատելով հանգանակութիւնը շարունակեն:

Ուսարը ետ կերթայ: Մենք որ, բարի նախանձով մը կաշխատինք, ինչպէս ամեն ժամանակ, նոյնպէս և այս անգամ գերազանցել Փրօվիսէնայ, ետ ենք մնացած, այսպէս ալ նկատեց ժողովին մէջ Կ. Յ. Գ.: Հոս ոչ տեղն է և ոչ ալ կուզեմք ուսարանի հայոց վերջին երկամսեայ տխուր տեղեկագրութիւնը ընել, միայն երկու խօսք բաւական է ըսել՝ «բարոյական մեռելութիւն» կը թագաւորէ հոս:

ԲԱՀՄՈՒՐ

Ուսար 5 յունիս.

Ն Ա Մ Ա Կ Ե Ի Ի Ք Ա Կ Օ Յ Ե Ն

Տէր վահրամ քահանային հրաւիրանքոք այսօր Ազգային ժողով մը ունեցանք: Օրուան խնդիրը թեմիս կազմակերպութիւնն էր: Կարգացուեցաւ Սեբաստիոն Սարաճեանի շքուարարականն ու ծրագիրը: Լուսաւորչակաւոր ու բողոքականի հարց ծագելով ահագին աղմուկ յառաջացաւ: Պ. Յ. Բուսեան խիստ մ'յիշուեցարար խօսեցաւ բողոքականներու դէմ, թեման դիմադրող ուժ մը չէր գտնուիր:

Երբ Յունաստանը 1897-ին պատերազմի բռնուեցաւ, անոր պաշտօնապէս զեկոտուեցաւ, որ ամեն պարագայի ռուկ ունէ եւրոպական պետութեան մը միջամտութեան վրայ յոյս չը դնէ, և թէ իր ձեռնարկին հետեանքը ինք պէտք է կրէ: Սակայն Տէլիեանիսի և թագաւորի պինդ զլլութիւնը պատերազմի աղէտները առաջացուց, ըստ որում ասոնք կը կարծէին թէ քաղաքականութիւնը չէր կարող զիրենք միանակ ձգել կուրսին մէջ և թէ անգամ մը, որ բոցը արծաթուեցաւ, որուն վրայ վստահ ալ էին, պետութիւնները ուզէին չուզէին պիտի բռնադատուէին մարիւն:

Գերմանիա Լորս Սօլգարիի նահանջին պատճառով յունական խնդրոյն մէջ Անգլիոյ ազգեցութեան օժանդակելու այլևս ո՛չ կամքը ունէր և ոչ ալ զիրքին մէջ կը գտնուէր, ահա այդ բանի պատասխանատուութիւնը մենք (Միացեալ Նահանգները) պէտք է ընդունինք և ոչ թէ «ստոր և հեթանոս» Գերմանիոյ կայսրը: Մեր յիմարարար նետած քարը անգլիական երկաթի գծին

րոնք վիճարանութեան առիթ տուած էին: Այս աղմուկները ինձ կը յիշեցնէր Ուսար, ուր վեց տարի առաջ իրար կը ձեռնէին կրօնական բաժանման խնդիրներով: Ժամանակ չէ՛ արդեօք, որ վերջ տրուին այս միջնադարեան վէճերուն: Հայը միշտ հայ է, ինչ դաւանութիւն ալ կուզէ թող պատկանի: Սրբազանի ծրագիրը կը հրաւիրէ մտնել մեր եկեղեցոյ կազմակերպութեան մէջ այն անձանց որոնք կը ճանչնան հայ Հոլովի Հովանաւորութիւնը, բողոքականներն ալ կրնան միանալ եթէ կընդունին: Ժողովին 38 հոգի միայն ներկայ էին, այն ալ մեծ մասամբ շրջակայքէն եկած: Ո՛ր էին Շիքաօյի 2-300 ազգայինները: Չը մոռնամ ըսել թէ շատերը կը քննադատէ ժողովի ատեն, այնպէս որ ատենակցեալ ստիպուած էր շարունակ ձայն տալ: Երկար վիճարանութիւններէ յետոյ, վերջապէս 7 անձինքնէրէ բաղկացեալ հոգաբարձական մարմին մը ընտրուեցաւ, Օժանդակ մասնաճիւղի մը հետ միասին:

Ս. ԹԻՐՊԻՍ

Մայիս 28 Երեւակո

Ն Ա Մ Ա Կ Խ Մ Բ Ա Գ Ր ՈՒ Թ Ե Ա Ն

Տէր Խմբագիր
Հոգաբարձութիւն մասնաւորապէս կը խնդրէ որ, հաճիրք ձեր պատուական շարքի մէջ յարգելով յարգանքով թւոյն մէջ հրատարակել հետեւեալը: Ամսոյս 1-ին, հոգաբարձութիւնն ի նպատակ վաստակակաւի սովելոց բացուած հանգանակութեան արդիւնքը քննելէ յետոյ փակեց: Հանգանակութեան արդիւնքը հասած է 247 տօլարի, որուն 200 տօլարը կանխաւ Գեր. Յովսէփի եւ Սարաճեանի հրամանաւ զրկուեցաւ նրա Եօրք Տիար Թաւաճեանի և անոր Ազգային Պատրիարքարան, մնացորդն ալ նորին գերապատուութեան հրամանաւ յաճուեցաւ, տեղւոյս նորընտիր հոգաւոր հովիւ Արթ. Տ. Մաշթոց վարդապետի, Նորին Արժանապատուութիւնը ուրիշ տեղերէ զրկուած նպատակներու հետ մէկտեղ զրկեց Պատրիարքարան:

Այս առիթը հոգաբարձութիւնն մասնաւորապէս իր շնորհակալութիւնը կը յայտնէ ամեն անոնց, որոնք

վրայ՝ ամբողջ եւրոպական կառախուստով իր գծէն հանելու և մարդկութեան ալ անհամար կորուստներ տալու հետեանքն ունեցաւ:

Միևնոյն վիճակը կըստանք Պալքանեան իշխանութիւններուն համար, ինչ որ վիճակուեցաւ Յունաստանին: Անկարելի է այլևս եւրոպական խաղաղութիւնը վասնզող պատերազմի մը ծագելուն առաջն աննել, որովհետև ներկայիս կուսակցութիւնները այնպիսի հաւասար կերպով բաժնուած են, որ միջամտութիւն մը աւելի հաւանական է երբ պատերազմ ոկի: Յունաստանի պատերազմէն չէզոք մնալ կարելի էր, որ կերպով մը բաժնուած է մնացեալ իշխանապետութիւններէն, բայց Պուլկարայի մէջ այդ անհնար է և կարելի չէ ապացուել որ պատերազմ մը մարդկութեան բարիք պիտի բերէ, եթէ Անգլիան և Գերմանիան, այն է՝ երբեակ նիդակացութիւնը չը համադրեալ ինչպէս որ պիտի ընէին հայկական խնդրոյն մէջ եթէ մենք (Միացեալ Նահանգները) չըլլայինք:

W. J. Stillman

ազգասիրարար թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս աջակցեցան ու օգնութեան ձեռք կառկանցին «Արծիւ վաստակակաւի» սովատանջ գաւակաց:

Մնամ ի դիմաց հոգաբարձութեան՝

Ատենադպիր Թ. Գ. ՇԵՏԻԿԵԱՆ

Պատոն 4 յունիս 99

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Տիար Յ. Ա. Գամպէր պաշտօնապէս կը հաղորդէ՝ Ձե՛ՅԹՈՒՆ-ի կարօտելոց համար ստացուած է ընդամենը \$ 1802, 04 որուն մէջ կը պարունակէ \$ 12, 60 որ վերջերս ստացուած է Ուստրի Արարատեան դերասանական խմբի կողմանէ:

Վերջիջեալ գումարին փոխարժէքը 371 անգլիական ոսկի 2 շիլլին և 3 բէնս զրկուած է պէտք եղած տեղը ու հաշիւը փակուած է:

ԼՈՎԷԼ ԷՆ Պ. Կ. Գորգէն մեզ կը գրէ մայիս 22 թուականաւ:—Սարաճեան սրբազան կիրակի օր հանդիսաւոր պատարագ մատուցեց Եպիսկոպոսականաց Ս. Յովհաննէ եկեղեցոյ մէջ: Այս առիթը քաղաքիս քանի մը թերթերը խմբագրականներ նուիրած էին հայկական եկեղեցոյ մասին: Պատարագի աւարտումէն յետոյ հանգանակութեան ձեռնարկուելով \$ 50, 50 գոյացաւ: Երկուոյն ընդհանուր ժողով ունենալով սրբազան քարոզեց: Ի միջի այլոց ըսաւ որ «Լուսաւորչական ու բողոքական ազգայինք պէտք համերաշխ սարկին, առանց ի նկատի ունենալու կրօնական խարուսթիւնք, քանի որ մի ազգի զաւակներ են»:

Գեր. Սրբազանը նոյն ազատամիտ աւ գովելի միտքը թրօյի մէջ ալ յայտնած էր, և հոն ժամանակէ մը ի վեր կրօնական խարուսթեան պատճառով՝ զոյուցիւն ունեցող երկպառակութիւնները իր այցելութեամբ վերջ գտեր են: Երբ մեր Առաջնորդն ալ նոյնը կը քարոզէ, ժամանակ է ուրբեմն վերջ տալ կրօնական ունայն վէճերուն ու երկպառակութեանց, որ ժամանակ մը մեզ շատ հեռացուցին իրարմէ:

ԹՐՕՅԷՆ Պ. Սանիմ մեզ կը գրէ՝ ի նպատակ սովելոց հանգանակուած \$ 115 զրկուեցաւ Սրբազան Առաջնորդին և \$ 4 ալ ապառիկ կը մնայ: Ի նպատակ վանի սովելոց հրատարակած «Տիգրիս»-ը մեծ ընդունելութիւն գտաւ հոս:

ՏՕՎԸՐՆԷ Պ. Ս. մեզ կը հաղորդէ՝ ի նպատակ վանի սովելոց հոս հանգանակուեցաւ \$ 28, որ զրկեցինք Տիար Թաւաճեանի: «Տիգրիս»-ը ամբողջութեամբ ծախուեցաւ և հասցւել 50 սէնթ նուէրի մը հետ զրկուեցաւ Սրբազանին:

ՓԱԹՐՍԸՆԷՆ Պ. Պ. կը հաղորդէ՝ Տեղւոյս հայ բողոքականաց եկեղեցոյ քարոզիչ Պատ. Խաղօեան երկու շաբաթ առաջ եկեղեցոյ մէջ խօսեցաւ վանի սովելաներու մասին և հանգանակութեան ձեռնարկելով չափաւոր գումար մը հաւաքուեցաւ ու ձիշդ երկրորդ օրը, գրամը զԸԿԿԵԱՆ վան մեր թշուառ ու անօթի եղբայրներուն: Նորէն պիտի ջանանք հանգանակութիւն մը ընել:

ՖԻԶՊՈՒՐԿԷՆ Պ. Գ. կը հաղորդէ մայիս 31 թուով:—Անցեալ կիրակի Արթ. Մաշթոց վարդապետը պատարագեց ու քարոզ խօսեցաւ նիւթ ունենալով «Պաշին յաղթանակը»:

Յիսուէն աւելի երկսեռ ազգայինք ներկայ էին: Հանգանակութեան ձեռնարկուելով \$ 63, 75 գոյացաւ ի նպատակ վանի սովելաներուն: Հանգանակութիւնը դեռ կը շարունակուի:

ՎԵՍ 20ՊՕԲԸՆԻ Հայոց միացեալ ազգականութեան հովանաւորութեան տակ, հայուհիները կը պատրաստեն վիճակահանգէս մը ի նպատակ վանի սովելոց:

ՉԸԼՍԻԷՆ Պ. Ա. Մ. մեզ կը հաղորդէ՝—Երկու տարի է, որ Չըսիի հայոց մասին միշտ աննպաստ կը խօսուէր: Այժմ գայթակղութեան քարք մէջ տեղէն վերցուած է, ոգևորութեան ու գործունէութեան նշոյններ կը տեսնուին հոս: Գրադարանը նորէն հաստատուեցաւ, ազգային հոգաբարձական մարմին մը ունեցանք և որ աւելի միջիարական է, աս նորահաստատ Որբախնամ ընկերութիւնն է, որուն մասնակցած են տիկնայներն ալ, որոնք հասկցած են թէ՛ իրենց որդիներէն զատ Հայաստանի մէջ ալ ունին որդիներ անտէր ու անպաշտպան: Անցեալ օր ընդհանուր ժողովով որոշուեցաւ չորս որբ դուրս վանի նահանգին մէջ, հոտ աւելի կարիք կայ և այդ նպատակին համար 5 անգլիական ոսկի զրկեց Ազգային Պատրիարքարան: Սհա այսպէս Չըսիի հայութիւնն ալ ցոյց կուտայ թէ՛ գիտէ իր պարտքը կատարել:

Յառաջիկայ կիրակի տեղւոյս հովիւ Արթ. Տ. Սաղ վարդապետ կը մեկնի ի Թրոյ Ս. Պատարագ մատուցանելու համար: Ուստի Սուրբ Ոսկերբան եկեղեցոյն մէջ պիտի կատարուի ժամերգութեան արարողութիւն և Տօք. Յ. Արշակունի պիտի խօսի նիւթ ունենալով «Հոգեւոր առողջապահութիւնը»:

Տեղւոյս հայ. եկեղեցոյ հոգաբարձութեան անդամոց մի քանիսին բացակայութեան պատճառաւ, հետեւեալ որոշումը եղած է.

Ատենապետ Յ. Ս. Թաւաճեանի բացակայութեան միջոցին, հոգաբարձութեան ատենադպիր Յ. Ա. Գամպէր պիտի վարէ առժամանակեայ կերպով ատենապետութեան պաշտօնը, նոյն միջոցին Պ. Երկանեան պիտի սամաձնէ առժամանակեայ ատենադպրութեան պաշտօնը, նոյնպէս գանձապետութեան պաշտօնը առժամանակեայ կերպով կը վարէ Յ. Հիւրմիւզ Ա. Բէլէկեանի մեկնելէն ի վեր:

Մայիս 24 ին Ս. Թաւաճեան Պօլիս ուղևորեցաւ հանդերձ ընտանեօք Փրանսական «լա Թուրէն» շոգենաւով: Բաւական թուով ամերիկացի և հայ բարեկամներ գացած էին ողջերթ մաղթելու իրենց. գեղեցիկ ծաղիկ փունջեր զրկուած էր Տիկին Թաւաճեանի:

Մայիս 19 ին քաղաք վերադարձաւ Յ. Ա. Գամպէր, չորս ամսուայ բացակայութենէ յետոյ:

ԲԱՊԱՐԱԿԱՅԻ

ԵՆՄԵՆ

Սանաէն եկած լուրերը կը յայտարարեն թէ Ենմէնի մէջ կայուցութիւնը ապստամբութեան ծագումի ատենէն աւելի վստօթար է և թէ Ապտուլահ փաշա որ ուղակի Իմամի վրայ յառաջացած էր Սանա քաղաքը բռնադատուէր է: Շատ մը մարդու կորուստ ունեցած է մաս-

